



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



ԳԵՂԱՇԵՆ

ԿԱՄԱՐԻՍ

ԶՈՎՔ



Այս հետազոտությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության /ԱՄՆ ՄԶԳ/ միջոցով: Հետազոտության բովանդակությունը միմիայն հեղինակներին է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ (PACA)

Վերլուծության իրականացնող կառույց

Գեղարքունիքի մարզի առևտրաարդյունաբերական պալատ



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԱՌԵՎՏՐԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ
GEGHARKUNIK CHAMBER OF COMMERCE AND INDUSTRY

Համայնքներում տեղական տնտեսական զարգացման գործընթացն սկսվեց 2015թ-ի մայիս – հունիս ամիսներին ԱՄՆ ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ համատեղ իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» (PRP) ծրագրի շրջանակում: Բացահայտվեցին համայնքների հիմնական մրցակցային առավելությունները և ախտորոշվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, որոնց հիման վրա առաջարկվեցին տնտեսության զարգացման համար արմատական նշանակություն ունեցող նախաձեռնություններ:

Գործընթացն իր մեջ ներառեց հետևյալ փուլերը.

- ⇒ Գործընթացի ընդհանուր ներկայացում, ծանոթություն, խմբի հավաքագրում:
- ⇒ Համայնքների տնտեսական քարտեզագրում- առաջատար ճյուղերի առանձնացում, ճյուղերում առաջատար դերակատարների բացահայտում:
- ⇒ Առկա արժեզրեաների վերլուծություն, բարեփոխման նախաձեռնությունների բացահայտում:
- ⇒ Աշխատանքային հանդիպումներ՝ առաջատար ճյուղերի վերլուծության համար:
- ⇒ Արդյունքների ամփոփում, նախաձեռնությունների ստացում:
- ⇒ Նախաձեռնությունների վերջնականացում, գրքույկի մշակում:
- ⇒ Ստացված արդյունքների, նախաձեռնությունների ներկայացում համայնքների ակտիվ դերակատարներին:

Բովանդակություն

Վերլուծության իրականացնող կառույց.....	2
Բովանդակություն.....	3
Համայնքներ.....	4
Գեղաշեն.....	4
Կամարիս	5
Չովք.....	5
Տնտեսության ճյուղերի վերլուծություն	6
Համայնքների մրցակցային առավելությունները.....	7
Անասնապահության վերլուծություն.....	8
Ընդհանուր տվյալներ.....	8
Շուկայի վերլուծություն.....	9
Անասնաբուժական ծառայություններ.....	10
Անասնակերի արտադրություն և խտացված կերերի վաճառք.....	10
Մարդկային ռեսուրսներ և սարքավորումներ.....	12
Անասնապահության ոլորտում ծախսային հաշվարկ.....	13
Նախաձեռնություններ անասնապահության արժեշրթայում	16
Հողագործության վերլուծություն.....	17
Նախաձեռնություններ հողագործության ոլորտում	19

Համայնքներ

Գեղաշեն, Կամարիս և Զովք գյուղերը տեղակայված են Գեղամա լեռնաշղթայի արևմտյան ստորոտին՝ ծովի մակերևույթից 1500 – 1700 մետր բարձրության վրա:

Գտնվում են իրար հարևանությամբ, տարիների ընթացքում բարեկամական, տնտեսական առումով սերտաճել են: Բոլոր համայնքներում էլ տնտեսության հիմնական ճյուղերը անասնապահությունն ու դաշտավարությունն են, մասամբ՝ այգեգործությունը:

Աբովյան և Երևան քաղաքներին մոտ լինելը այս գյուղերի տնտեսության զարգացման համար ունի թե՛ դրական, թե՛ բացասական ազդեցություն: Մեծ քաղաքներին և մայրաքաղաքին մոտ լինելը թույլ է տալիս ունենալ արդյունավետ կապեր թե՛ մատակարարման, և թե՛ շուկայի ոլորտներում: Միննույն ժամանակ 10 – 20 կմ հեռավորությունը խոչընդոտ չէ երիտասարդների համար Երևանում աշխատանք փնտրելու համար, ինչի արդյունքում մեծ քանակությամբ մարդիկ աշխատում են Երևանում՝ կտրվելով սեփական համայնքում գյուղատնտեսությամբ զբաղվելու հնարավորությունից: Այս խնդիրը առավել սուր արտահայտված է երիտասարդների մոտ, որոնց մեջ բավականին մեծ մաս են կազմում այն մարդիկ, որոնք իրենց ապագան տեսնում են Երևանում:

Գեղաշեն

Գտնվում է Աբովյան քաղաքից 12կմ հարավ – արևելք: Այն երեք գյուղերից ամենախոշորն է, այստեղ ապրում է 4250 մարդ: Համայնքի ներսում բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է, դաշտավարությունը և այգեգործությունը: Բնակիչները ներգաղթել են Ալաշկերտի, Սպահանի եւ Խոյի գավառներից՝ 1829 - 35թթ. եւ 1870 - ին:

Կամարիս

Գտնվում է Աբովյան քաղաքից 10 կմ արևելք, Գեղամա լեռնաշղթայի արևմտյան ստորոտին: Նախկինում կոչվել է Գյամրեգ: Բնակիչների նախնիները եկել են Խոյից ու Բայազետից՝ 1829 թվականին, և Մակուից՝ 1879 թվականին: Գյուղի տարածքում բավականին շատ են հնավայրերը՝ ամրոց, դամբարանադաշտեր և այլն:

Բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է և դաշտավարությունը:

Զովք

Մոտ 1000 բնակիչ ունեցող այս համայնքում ևս բնակչության հիմնական զբաղմունքը անասնապահությունն է և դաշտավարությունը: Մայրաքաղաքից հեռավորությունը մոտ 15 կմ է, աշխատում է երթուղի: Զովքում է գտնվում «Չանախ» պանրի արտադրության գործարանը, որը այս և հարևան համայնքներում արտադրվող կաթի հիմնական մթերոդներից մեկն է հանդիսանում:

Աղյուսակ 1.1. Համայնքների վերաբերյալ վիճակագրական տվյալներ

	Գեղաշեն	Կամարիս	Զովք
Բնակչություն	4249	2500	1065
Տնային տնտեսություններ	970	580	291
Վարելահող	791 հա	900 հա	226 հա
Որից՝ ջրովի	-	40 հա	144 հա
Խոտհարք	603 հա	170 հա	82 հա
Արոտավայր	4289 հա	800 հա	198.17 հա
Խոշոր եղջերավոր	5633	1500	915
• Որից՝ կովեր	2334	600	401
Մանր եղջերավոր	605	1200	149
Կոմբայն	-	-	1
Թրթուրավոր տրակտոր	8	6	10

Տնտեսության ճյուղերի վերլուծություն

Համայնքների տնտեսության հիմնական ճյուղերը վերլուծելիս հաշվի է առնվել, թե որտե՛ղ է կենտրոնացած համայնքի աշխատող բնակչության մեծ մասը և որտե՛ղ է ստեղծվում ամենամեծ եկամուտը: Գնահատվել են այս ճյուղերի զարգացման վրա ազդեցություն ունեցող գործոնները, արժեքային շղթաները, օժանդակող ճյուղերի հասանելիությունը, անհրաժեշտ ենթակառուցվածքների հասանելիությունն ու ճյուղում առկա պահանջարկի որակը: Ուշադրություն է դարձվել ճյուղերի շահութաբերության վրա՝ համեմատած այլ ճյուղերի և համայնքների (որոշ դեպքերում՝ տարածաշրջանների և հանրապետության միջին) ցուցանիշների հետ:

Փորձագետները և տեղական թիմը համատեղ առանձնացրել են համայնքների տնտեսական զարգացման գերակա ճյուղերը, որոնք հիմնված են տեղական մրցակցային առավելությունների վրա.

Ռազմավարական ճյուղեր.

⇒ Խոշոր եղջերավոր անասնապահություն

Խոշոր եղջերավոր անասնապահությունը համայնքներում տնտեսության հիմնական ճյուղերից է, որտեղ էլ ստեղծվում է բնակչության եկամտի հիմնական մասը: Անասնապահության զարգացման համար համայնքներն ունեն նպաստավոր բնակլիմայական պայմաններ և բավարար քանակությամբ ռեսուրսներ, չնայած տարբեր համայնքներում բողոքում են այդ ռեսուրսների ոչ արդար վերաբաշխումից:

⇒ Դաշտավարություն

Դաշտավարությունը այս համայնքներում ավանդաբար զարգացած է եղել: Դաշտավարության զարգացումը կախված է ռոտզման հնարավորությունների ընդլայնումից և նոր, առավել եկամտաբեր մշակաբույսերի աճեցումից:

Համայնքների մրցակցային առավելությունները



- Արտավայրերի և խոտհարքերի բավարար քանակություն, վարելահողեր, որտեղ հնարավոր է լրացուցիչ կերեր աճեցնել:
- Արտավայրերում ու խոտհարքերում առկա են բազմազան և բարձր սննդարար հատկանիշներ ունեցող խոտաբույսեր, ինչի շնորհիվ խոտի կալորիականությունը բավականին բարձր է:
- Լրացուցիչ մատչելի կերերի գնման հնարավորություն, օրինակ՝ գարեջրի արտադրության գործարանների մնացորդները, որոնք սննդարար կեր են հանդիսանում անասունների համար:
- Երևան քաղաքին մոտ գտնվելը, ինչը հեշտացնում է մատակարարման, սպասարկման և շուկայի հետ կապված բեռնափոխադրումները:
- Աշխատասեր և համագործակցության հակված մարդիկ, ովքեր բաց են նորամուծության համար:

Անասնապահության վերլուծություն

Ընդհանուր տվյալներ

Ընդհանուր առմամբ երեք համայնքներում անասնապահությամբ է զբաղվում տնային տնտեսությունների մոտ 80% -ը:

Ստորև աղյուսակում ներկայացված է տնային տնտեսությունների բաշխվածությունը՝ ըստ պահվող անասնազլխաքանակի և համայնքների:

Աղյուսակ. Տնային տնտեսությունների բաշխվածությունը՝ ըստ պահվող անասնազլխաքանակի

	Գեղաշեն	Կամարիս	Զովք
25 և ավել գլուխ	35	12	10
10 – 20 գլուխ	70	8	5
մինչև 10 գլուխ	407	400	210

Համայնքներում գերակշռում է «կովկասյան գորշ» տեսակը: Տարեկան միջին կաթնատվությունը բարձր է 2500 լիտրից, ինչը այս տեսակի անասունների համար բավականին բարձր ցուցանիշ է:

Խոշոր ֆերմերները գարուն – աշուն ժամանակահատվածում օգտագործում են հեռագնա արոտավայրերը: Հեռագնայում առկա է ջրի և էլեկտաեներգիայի խնդիր, ինչը դժվարացնում է պահքի կազմակերպումը: Այժմ արոտների ջրարբիացմանն ուղղված որոշակի քայլեր են ձեռնարկվում և հնարավոր է, որ առաջիկայում այդ խնդիրը լուծում ստանա:

Շուկայի վերլուծություն

Խոշոր ֆերմերների կողմից արտադրվող կաթի հիմնական մասը՝ մոտ 95%-ը, հանձնվում է կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների, իսկ մնացած 5% -ը օգտագործվում է սեփական կարքիների բավարարման համար, ինչպես նաև ծանոթ – բարեկամ շրջապատում փոքր քանակությամբ կաթնամթերքի վաճառման համար (պանիր, մածուն, թարմ կաթ, յուղ):

Զուլքի տարածքում է գործում «Չանախ» պանրի արտադրության գործարանը, որը հանդիսանում է կաթի հիմնական մթերոդներից մեկը: Կաթ են հավաքում նաև այնպիսի խոշոր կաթնամթերք արտադրող ձեռնարկությունների ներկայացուցիչներ, ինչպիսիք են «Մարիաննան», «Աշտարակ Կաթը», «Թամարան», «Արզնի կաթը»:

Վերլուծության ընթացքում շուկայում կաթի գները մոտ 30 -40 % -ով անկում ապրեցին՝ հասնելով 110 – 120 դրամի այն դեպքում, որ անցած տարի նույն ժամանակահատվածի համար գները տատանվում էին 140 – 170 դրամ՝ մեկ լիտրի համար: Գնի իջեցումից բացի նվազել է նաև ընդունվող կաթի քանակը, եղել են դեպքեր, երբ ֆերմերները կաթը հասցրել են գործարան, սակայն գործարաններում կաթը չի մթերվել բազմաթիվ պատճառաբանություններով:

Վաճառքի նպատակով հիմնականում արտադրվում է պանիր: Տնային պայմաններում պանրի արտադրությունը այս տարի կավելանա, քանի որ շարունակական նվազող կաթի գները ստիպում են ֆերմերներին մտածել այլընտրանքային եկամտի մասին:

Տնական պայմաններում արտադրվող պանրի գինը շուկայում տատանվում է 1200 – 1800 դրամի սահմաններում՝ կախված հաճախորդից, վաճառվող պանրի քանակից և սեզոնից:

Թարմ կաթը փոքր ծավալներով վաճառվում է բնակչությանը մոտ 200 դրամով, սակայն պահանջարկը բավականին փոքր է:

Յուղը վաճառվում է միջինը 3000 դրամով, 0.5 կգ տարաններով մածունը՝ 150 – 200 դրամով:

Մսի վաճառքն իրականացվում է հիմնականում Աբովյանի և Երևանի վերավաճառողների և մսավաճառների միջոցով, ովքեր համայնքներից գնում են միսը: Երինջի և հորթի միսը վաճառվում է 2000 – 2100 դրամով, մնացածը՝ միջինը 1500 դրամով:

Անասնաբուժական ծառայություններ

Անասնաբուժական ծառայությունները բոլոր խոշոր անասնապահական համայնքներում էական և կարևոր ազդեցություն ունեն ոլորտի զարգացման վրա: Համայնքներում հասանելի են անասնաբուժական ծառայությունները: Անասնաբույժները պետական պատվերի շրջանակներում մատուցում են վակցինացման ծառայություններ:

Անցած տարի Գեղաշեն համայնքում հայտարարվեց կարանտին՝ կենդանիների մոտ բրյուցելյոս հիվանդության հայտնաբերման պատճառով: Այս պահին այդ խնդիրը հաղթահարված է, և գյուղերը արտադրում են մաքուր և որակյալ կաթ, միս:

Չնայած պետական աջակցությանը՝ ակնհայտ է անասնաբուժական ծառայությունների աճի խնդիր, մասնավորապես՝ պետական աջակցությունից դուրս ծառայությունների մատուցման, այդ թվում՝ արհեստական սերմնավորման ուղղությամբ:

Գյուղերում արհեստական սերմնավորման փորձերը հիմնականում մեծ արդյունք չեն տվել: Ֆերմերները երևույթը մեկնաբանում են սերմնավորման ծառայությունների որակով և մոտեցմամբ: Սերմնավորողը չի երաշխավորում արդյունքը, իսկ լրացուցիչ սերմնավորումը նույնպես վճարովի է:

Անասնակերի արտադրություն և խտացված կերերի վաճառք

Գրեթե բոլոր ֆերմերները ունեն անասնախոտի հավաքման սեփական սարքավորումները և խոտը հավաքում են սեփական ուժերով: Հանդամիջյան ճանապարհները բոլոր գյուղերում բարելավման կարիք ունեն: Ճանապարհների վիճակը էականորեն դժվարացնում է ինչպես խոտի հավաքման գործընթացը, այնպես էլ կաթի մթերման, կթվորների տեղափոխման հետ կապված աշխատանքները:

Անասնախոտի ձեռքբերման ինքնարժեքը կախված է խոտի հավաքման գործընթացին ֆերմերի ներգրավվածության աստիճանից և առկա գյուղտեխնիկայից: Մեկ կիլոգրամի արժեքը կարող է տատանվել 25 – 35 դրամի սահմաններում:

Առկա խոտհարքները բավարար չեն եղած անասնագլխաքանակի համար և ֆերմերները գնում են նաև անասնակեր այլ շրջաններից՝ Արարատյան դաշտ, Գեղարքունիք, Տավուշ և այլն:

Բավականին արդյունավետ կարող է լինել բազմամյա խոտաբույսերի աճեցումը ինչը էականորեն կարող է իջեցնել անասնախոտի ձեռքբերման վրա կատարվող ծախսը, ինչպես նաև ապահովել լրացուցիչ կերատեսակներով:

Ստորև ներկայացված է առվույտի և այլ բազմամյա խոտաբույսերի աճեցման համար անհրաժեշտ ծախսերը և ինքնարժեքը (չի ներառում տեղափոխումը):

Տեսակը	Բերքատվությունը ց/հա	Ցանփի ծախսերը հա/դրամ	Հավաքման ծախսերը հա/դրամ	Ընդամենը	1 կգ-ի հաշվով կատարվող ծախսը	1 հակի (20կգ) հաշվով կատարվող ծախսը
Առվույտ	70	40000	100500	140500	20	401
Կորնզան	63	40000	95250	135250	21	429
Վարսակ	40	40000	78000	118000	30	590
Խոտհարք	17	0	55750	55750	33	656

Ինչպես երևում է աղյուսակից, ինքնարժեքը գրեթե նույնն է, ինչ անասնախոտի հավաքման դեպքում, սակայն բերքատվության աճը և բարձր կալորիականությունը դարձնում է խոտաբույսի աճեցումը առավել արդյունավետ, քան անասնախոտի հավաքումն է:

Ստորև ներկայացված է հիմնական հասանելի անասնակերի կալորիականությունը:

Տեսակ	Կերամիավորի պարունակությունը 1 կգ-ի մեջ
Քուսպ արևածաղկի	1,1
Եգիպտացորեն	1,1
Թեփ ցորենի	0,7
Թեփ գարու	0,7
Խոտառվույտի	0,52
Կորնզան	0,47
Կարտոֆիլ	0,3
Վարսակ	0,26
Բնական խոտ	0,11

Ինչպես երևում է աղյուսակից, թե՛ վարսակի, թե՛ կորնզանի, թե՛ առվույտի դեպքում կերամիավորի պարունակությունը 1 կգ-ի մեջ 2 – 5 անգամ ավելի մեծ է:

Ստորև ներկայացված են հասանելի լրացուցիչ կերերի արժեքները:

- Թեփ – 150 -170 դրամ,

- Գարի – 150 դրամ,
- Համակցված կեր – 250 դրամ:
- «Փլուշ» - 10 դրամ:

Ըստ ֆերմերների՝ առավել արդյունավետ է սպիրտային արտադրանքներ թողարկող գործարանների կողմից արտադրանքի մնացորդը, որն անվանում են «Փլուշ»: Այն բավականին էժան է և ունի բարձր արդյունավետություն: Անասունների համեմատաբար բարձր կաթնատվության հիմքում, նրանք պնդում են, որ ընկած է նաև այս կերի հասանելիությունը: Կերը կարող են ձեռք բերել 5դրամ/լիտր գնով շուկայից և տեղախոխել կամ իրենց մոտից գնել՝ լիտրի համար վճարելով 10 դրամ:

Մարդկային ռեսուրսներ և սարքավորումներ

Չնայած բավականին բարդ է կթվորներ և նախրապաններ գտնելը, սակայն կթի ավտոմատացված համակարգեր քչերն են օգտագործում: Կթվորների մեծ պահանջարկը բերել է կթման գների անհրատեսական բարձրացմանը:

Մեկ կովի համար ամսական կթման գինը հասնում է մինչև 9 000 դրամի: Ֆերմերները նաև բավականին մեծ ծախսեր են անում դեպի արոտավայրեր կթվորների ամենօրյա տեղափոխման համար:

Այս պայմաններում կթի գործընթացի ավտոմատացումը էական ու կարևոր ազդեցություն կարող է ունենալ կաթի ստացման ինքնարժեքի վրա: Եթե հաշվենք օրական մեկ կովը միջինը տալիս է 12 լիտր կաթ, ապա կստացվի որ ամսական 360 լիտր (30 * 12 լիտր) կաթ ստանալու համար ֆերմերները վճարում են 9000 դրամ + մոտ 2 000 դրամ տեղախոխման վճար մեկ կովի հաշվարկով:

Եթե 11 000 դրամը բաժանենք 360 լիտրի վրա, ապա միայն այս մասով մեկ լիտր կաթի համար ստանում ենք մոտ 30 դրամ ինքնարժեք (ֆերմերները բարկացած են այն պնդման պատճառով, որը լսել են պետական մարմինների ներկայացուցչի կողմից, թե ամառվա սեզոնին կաթի ինքնարժեքը մոտ է անվճարին):

Անասնապահության ոլորտում ծախսային հաշվարկ

Կան բազմաթիվ կարծիքներ կաթի և մսի ինքնարժեքի հետ կապված: Կարծիքները հիմնականում ծայրահեղացված են, և դրանց տակ չկա հիմնավորված հաշվարկ: Ֆերմերները պնդում են, որ իրականում կաթը գրեթե ինքնարժեքով են վաճառում, ու նաև ինքնարժեքից ցածր: Կան տեսակետներ, որ կաթը ամառվա ընթացքում ունի շատ ցածր ինքնարժեք: Ամեն դեպքում բոլոր ֆերմերները տարբեր մարզերում համաձայն են մեկ հարցի շուրջ՝ խանութում վաճառվող մեկ լիտր տարայավորված ջուրը ավելի թանկ արժե, քան մեկ լիտր կաթը:

Կաթի ինքնարժեքը կախված է բազմաթիվ գործոններից՝ անասունների գլխաքանակ, անասնախոտի հասանելիություն, անասունների սորտեր, անասնախոտի հավաքման գործընթացում ֆերմերի ներգրավվածություն, կթի ավտոմատացում և այլն:


Ստորև ներկայացված է կաթի ստացման ինքնարժեքը՝ կախված տարբեր գործոններից: Ծախսերը հաշվարկված են երեք համայնքներում և, այլ համայնքների հետ համեմատած, կարող են տարբերվել:

Ծախս / Դրամ	Տնտեսություններ որոնք ունեն		
	Մինչև 5 կով	5 – 20 կով	20 - 50 կով
Անասնախոտի հավաքում/ գնում	10/ 25	15 / 20	10 / 15
Լրացուցիչ կերի արտադրություն/ գնում	10 / 20	12 / 15	8 / 10
Կիթ՝ ավտոմատ եղանակով / սեփական ուժերով / կթվորների միջոցով	5 / 2 / 10	5 / 5 / 30	5 / 5 / 20
Վարկային միջոցների տոկոսադրույքներ	10	10	12
Այլ ծախսեր	30	30	35

Աղյուսակից երևում է, որ մինչև 5 կով ունեցող տնտեսությունների վրա մեկ լիտր կաթի ինքնարժեքը ընկած է 62 – 95 դրամի սահմաններում՝ կախված աշխատանքների տնային տնտեսությունների ներգրավվածության աստիճանից:

5 – 20 կով ունեցողների համար ինքնարժեքը ընկած է 72 – 105 դրամի սահմաններում:

20 – 50 կով ունեցողների համար կաթի ինքնարժեքը տատանվում է 70 – 92 դրամի սահմաններում:



Ամենացածր ինքնարժեքը ստացվում է մինչև 5 կով ունեցող տնտեսություններում, ինչը պայմանավորված է պահանջվող ռեսուրսների և աշխատանքների փոքր ծավալով: Միջինացված ինքնարժեքը ստացվում է 77 դրամ:

Ամենաբարձր ինքնարժեքը 5 – 20 կով ունեցողների դեպքում է, որի դեպքում թե անասնախոտի լրացուցիչ գնումը և թե այլ մատակարարումներից օգտվելը բերում է ինքնարժեքի աճին: Միջին ինքնարժեքը 88.5 դրամ է, որը առանձին դեպքերում կարող է հասնել մինչև 105 դրամի:

Սկսած 20 կովից՝ կաթի ինքնարժեքը սկսում է նվազել՝ կենտրոնացված գնումների, աշխատանքների պատճառով: Այս դեպքում միջին ինքնարժեքը 81 դրամ է կազմում, առավելագույնը՝ 92 դրամ:

Ստորև ներկայացված է այդ տնտեսությունների համար ստացվող միջին շահույթը:

	5 կով	20 կով	50 կով
Վաճառքի ենթակա կաթ	5 * 2200 լիտր = 11000	20 * 2200 լիտր = 44 000 լիտր	50 * 2200 = 110 000 լիտր
Միջին վաճառքի գին 2014 / 2015	140 / 110 դրամ	140 / 110 դրամ	140 / 110 դրամ
Միջին ինքնարժեք	77 դրամ	88.5 դրամ	81 դրամ
Միջին շահույթ լիտրից 2014 / 2015	63 դրամ / 33 դրամ	52.5 դրամ / 22.5 դրամ	59 դրամ / 29 դրամ
Շահույթ տարեկան 2014 / 2015	693 000 դրամ / 363 000 դրամ	2 310 000 դրամ / 990 000 դրամ	6 490 000 դրամ / 3 190 000 դրամ

Կաթի գների անկումը գրեթե կրկնակի նվազեցրել է շահութաբերությունը՝ կասկածի տակ դնելով անասնապահության արդյունավետությունը ոչ միայն այս գյուղերի, այլ նաև անասնապահական բոլոր համայնքների համար:

Կաթի գնի անկման արդյունքում առավել խոցելի են դարձել 5 – 20 կով ունեցող տնտեսությունները: Մոտ 60 % - ով կրճատվել է կաթից ստացվող տնտեսությունների շահույթը: Այս տնտեսությունները կանգնած են անասունների գլխաքանակի համատարած կրճատման եզրին: «Կպահեմ 1 – 2 կով սեփական կարիքների համար» - ասում է Արսենը, ով իր կյանքի 10 տարին նվիրել է անասնապահությանը և մեծ ֆերմա ունենալու երազանքին:

Եթե առաջիկայում անասնապահության զարգացմանն ուղղված լայնածավալ ծրագրեր չիրականանցվեն՝ կաթի գնի նվազման կանխարգելման և ֆերմաների խոշորացման ուղղությամբ, ապա խոշոր անասնապահական բոլոր համայնքներում անասնապահության ոլորտը կտրուկ անկում կապրի:


Նախաձեռնություններ անասնապահության արժեզրթայում

- Խտացված կերի և բազմամյա խոտաբույսերի արտադրության աջակցություն:
- Խորհրդատվական, անասնաբուժական, արհեստական սերմնավորման և սարքավորումների մատակարարման որակյալ մասնավոր կենտրոնի հիմնում:
- Հեռագնաներում կթի սրահների կառուցման աջակցություն:
- Հեռագնաներում խմոցների կառուցման աջակցություն:
- Կաթի հավաքման կետի հիմնման աջակցություն:
- Տեղական կաթնամթերքի և մսամթերքի արտադրության փոքր արտադրամասերի հիմնման աջակցություն:
- Ապրանքների առաջմղում շուկաներում և տեխնիկական աջակցություն:

Հողագործության վերլուծություն

Համայնքներում զարգացած է հիմնականում դաշտավարությունը: Ցանում են հացահատիկ, բանջարեղեն և բազմամյա խոտաբույսեր: Այգեգործությունը համեմատաբար ավելի թույլ է զարգացած՝ հիմնականում ծառեր կան փոքր քանակությամբ տնամերձ հողամասերում: Վերջին տարիներին մարդիկ սկսել են նոր այգիներ հիմնել, որտեղ աճեցնում են խնձոր, տանձ, ծիրան, դեղձ, կեռաս, ընկույզ:

Ստորև ներկայացված է ցանվող մշակաբույսերի տեսակարար կշիռը.



Ինչպես երևում է աղյուսակից, հիմնականում ցանում են ցորեն՝ 40%, խոտաբույսեր և գարի՝ համապատասխանաբար 29% և 24%: Աճեցվող հաճարի տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ կազմում է 5%, բանջարեղենինը՝ 2%:

Եթե նայենք շահութաբերության տեսանկյունից, ապա կատարվի, որ ամենաեկամտաբեր բույսերը ցանվում են ավելի քիչ, և համեմատաբար շատ են ցանվում քիչ եկամտաբերություն ունեցող բույսերը, այսպես՝

ցորենի և գարու շահութաբերությունը տատանվում է 150 000 – 200 000 դրամի շրջանակում մեկ հեկտարի հաշվարկով, իսկ բանջարեղենի (ցանվում է լոբի, վարունգ, լոլիկ, սխտոր, կարտոֆիլ և այլն) շահութաբերությունը 1000 քմ – ի հաշվարկով (0.1 հեկտար) կազմում է

200 000 – 600 000 դրամ՝ կախված մշակվող Բանջարեղենի տեսակից և այդ տարում շուկայում ձևավորված միջին գնից:

Շահութաբերության նման տարբերության դեպքում (5 – 30 անգամ) առավել շահութաբեր բույսերի մշակման փոքր ծավալների հիմքում ընկած են հետևյալ գործոնները՝

1. Համայնքների մասնագիտացվածությունը դեպի անասնապահություն

Ցանկող գարին և խոտաբույսերը հիմնականում չեն վաճառվում և ծառայում են որպես լրացուցիչ կեր անասունների համար:

2. Փաստացի ջրովի հողերի փոքր տարածք

Փաստացի ջրովի հողակտորները իրականում շատ ավելի փոքր ծավալ ունեն, քան նշված են հողերի կարգավիճակներում: Մաշված և հնացած խողովակաշարերը, ջրի մատակարարման հետ կապված բազմաթիվ խնդիրները մարդկանց ստիպում են հիմնականում ցանել այնպիսի մշակաբույսեր, որոնցից հնարավոր է բերք ստանալ առանց ջրելու:

3. Հեշտ մշակվող բույսեր

Անասնապահությունը բավականին ժամանակատար է, ինչը թույլ չի տալիս լրացուցիչ ժամանակ հատկացնել այնպիսի բույսերի աճեցմանը, որոնք պահանջում են աճեցման փուլում գրեթե ամենօրյա աշխատանք: Այս դեպքում հատկապես հացահատիկի աճեցումը դառնում է բավականին գրավիչ, քանի որ չի ենթադրում 10 օրվանից առավել ներգրավվածություն աճեցում – բերքահավաք ամբողջ փուլում:

Բացի մշակումը, հացահատիկի իրացումը ևս բավականին հեշտ և արագ գործընթաց է և չի պահանջում մարդկանց կողմից մեծ ժամանակի ներդրում և շուկայական հարաբերությունների կայացում: Գարին հիմնականում ծառայում է որպես անասնակեր: Յորենի հիմնական մասը մարդիկ հանձնում են այրադացներին՝ փոխարենը վերցնելով այլուր՝ սեփական կարիքների բավարարման համար: Այլուրի ավելացված մասը հիմնականում վաճառում են ծանոթ – բարեկամ և այլ անձնական կապերի միջոցով:

4. Հնացած գյուղտեխնիկա

Համայնքներում գյուղտեխնիկայի թարմացման լուրջ խնդիր կա: Հին և ոչ բավարար քանակությամբ գյուղտեխնիկան լրացուցիչ խոչընդոտներ է ստեղծում հողերի մշակման և բույսերի աճեցման ընթացիկ ծառայությունների համար՝ ժամանակ, աշխատանքի որակ, ծառայության բարձր գին:

Չնայած այս պահին հողագործության ցածր եկամտաբերությանը՝ այս ոլորտը ունի զարգացման մեծ պոտենցիալ և կարող է դառնալ գյուղերի համար հիմնական եկամտի աղբյուր, հատկապես, եթե հաշվի առնենք, որ միայն կաթի գների հետ կապված ցանկացած անկառավարելի տատանման դեպքերից կախված՝ շատ համայնքներ բավականին ռիսկային գոտում են հայտնվում՝

Նախաձեռնություններ հողագործության ոլորտում

- Նոր մշակաբույսերի աճեցման աջակցություն՝ տեղեկություն, սերմեր:
- Ոռոգման ցանցի ընդլայնման աջակցություն:
- Հողերի լաբորատոր ստուգում և որակական հատկանիշների վերհանում:
- Գյուղտեխնիկայի թարմացման աջակցություն:
- Գարնանը գյուղատնտեսական աշխատանքների համար կարճաժամկետ մատչելի ֆինանսների հայթայթման օժանդակություն:
- Ջերմոցների հիմնման աջակցություն:

Շնորհակալություն ենք հայտնում Գեղաշեն, Կամարիս և Զովք համայնքների գյուղապետարաններին՝ հանձինս գյուղապետերի և տեղական թիմի անդամների՝ ծրագրի իրականացմանը աջակցելու համար:

